ածեալ կացին անխախտ և հաստատուն 'ի վերայ Օրինաց իւրեանց 'ի փոքրութենէ աճեցան բազմացան, և 'ի պատճառէ յօրինաց իւրեանց երջանկացան, գովաբանեցան 'ի բոլոր աշխարհէ, և երկիւղ քաջութեան սոցա եմուտ 'ի սիրտս ինքնակալ իշխանաց և ինքնակամ արարողաց մինչ խոնարհեցան, հնազանդեցան և հարկատու եղեն սոցայ, և որպէս սկիզբն սոցայ եղև զողութեամբ և աւազակութեամբ այլ յետ 'ի յոտս կանգնելոյն և հաստատելոյ սահմանս բարիս 'ի միջի իւրեանց՝ եղեն լուս աշխարհի, որ բազումք 'ի արդարութենէ սոցայ ուսան գործս բարիս արհեստ շահաւէտս, որում բազումք ելին 'ի միջէ սոցայ յատկապէս առաքինիք, թէպէտ 'ի Աստուածպաշտութիւնս հեթանոսի բնական արդարութեամբ զարդարեցան յոյժ մինչև ըստ սովորութեան յաշխարհի և բնութեան մարդոյ յագեցան, պարարտացան, հարստացան թողին միտ և խորհուրդ զօրութեան բանական հոգոյ իւրեանց և հետս կացին անցաւոր փառասիրութեանց մնոտի յաշխարհիս, թոյլ տալով մուծին մէջ իւրեանց կայսերութիւն ժառանգաւորութեան 'ի պատճառէ բարեգոյն և բարեպաշտ աշխատասէր կայսերաց, և ծերակուտք խորհրդարանի հռոմու իբր երախտագէտ լինելոյ յաղագաւ զի ծանիցեն երախտիս երախտաւորաց իւրեանց ոչ զրկելով որդիս բարեգոյն կայսերաց 'ի փառաց ժառան-